



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ**

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ №80

**ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ
ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՅՎԱԾ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ
ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՍՏԱՅԱԾ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՈՒՐԴ ՆԵՐԿԱՅԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2011 թվականի օգոստոսի 26-ի թիվ 15L որոշումը, Հայաստանի Հանրապետության դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացված որակավորման ստուգման արդյունքները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 116-րդ հոդվածի առաջին մասով Հայաստանի Հանրապետության դատական դպրոցի կառավարման խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհուրդ ներկայացնել դատավորների թեկնածությունների ցուցակի քաղաքացիական մասնագիտացմամբ բաժնի համալրման նպատակով անցկացված որակավորման ստուգման արդյունքներով ամենաբարձր հանրագումարային միավոր ստացած 12 հավակնորդների արդյունքները՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհուրդ ներկայացնել դատավորների թեկնածությունների ցուցակի քրեական մասնագիտացմամբ բաժնի համալրման նպատակով անցկացված որակավորման ստուգման արդյունքներով ամենաբարձր հանրագումարային միավոր ստացած 8 հավակնորդների արդյունքները՝ համաձայն հավելված 2-ի:

3. Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհուրդ ներկայացնել դատավորների թեկնածությունների ցուցակի վարչական մասնագիտացմամբ բաժնի համալրման նպատակով անցկացված որակավորման ստուգման արդյունքներով ամենաբարձր հանրագումարային միավոր ստացած 7 հավակնորդների արդյունքները՝ համաձայն հավելված 3-ի:

4. ՀՀ դատական իշխանության պաշտոնական ինտերնետ կայքում և «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում հրապարակել Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհուրդ ներկայացված ցուցակները և յուրաքանչյուր թեկնածուի կրթության, հետբուհական աշխատանքային գործունեության և ընտանեկան դրության վերաբերյալ տեղեկությունները՝ համաձայն հավելված 4-ի:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ե. Խունդկարյան
15 նոյեմբերի, 2011թ.
ք. Երևան

**ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ
 ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՄԲ ԲԱԺՆԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎԱԾ
 ՈՐԱԿՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՄԵՆԱԲԱՐՁՐ
 ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՍՏԱՑԱԾ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ԱՐՅՈՒՆՔՆԵՐԸ**

N	Անուն, ազգանուն	Հանրագումարային միավոր
1	Լիզա Գրիգորյան	150
2	Նորա Կարապետյան	150
3	Արթուր Աթաբեկյան	130
4	Իռնն Սարգսյան	130
5	Գևորգ Նարինյան	125
6	Էդգար Հովհաննիսյան	122
7	Զարուհի Նախշբարյան	122
8	Սերգեյ Սահակյան	122
9	Մերի Համբարձումյան	121
10	Տիգրան Փոլադյան	121
11	Տիգրան Գրիգորյան	120
12	Քրիստիննն Գրիգորյան	120

**ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՔՐԵԱԿԱՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՍԲ ԲԱԺՆԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎԱԾ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒՓՄԱՆ ԱՐՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՄԵՆԱԲԱՐՁՐ
ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՍՏԱՑԱԾ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ԱՐՅՈՒՆՔՆԵՐԸ**

N	Անուն, ազգանուն	Հանրագումարային միավոր
1	Արտակ Թադևոսյան	130
2	Արմեն Սարգսյան	130
3	Մարտին Գևորգյան	115
4	Անդրանիկ Մնացականյան	115
5	Ստեփան Համբարձումյան	110
6	Հրանտ Ավետյան	85
7	Դավիթ Գրիգորյան	85
8	Ռուբիկ Մխիթարյան	85

**ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՄԲ ԲԱԺՆԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎԱԾ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՄԵՆԱԲԱՐՁՐ
ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՍՏԱՑԱԾ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

N	Անուն, ազգանուն	Հանրագումարային միավոր
1	Գևորգ Սոսյան	130
2	Ալեքսանդրա Հարությունյան	110
3	Արսեն Նիկողոսյան	95
4	Միքայել Մելքումյան	90
5	Ռաֆիկ Խանդանյան	85
6	Անի Հարությունյան	85
7	Արմեն Դավթյան	65

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ դատական դպրոցի կառավարման խորհուրդը հրապարակում է
դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացված
որակավորման ստուգման արդյունքներով ամենաբարձր հանրագումարային միավորներ ստացած
հավակնորդների ցուցակը.**

Քաղաքացիական մասնագիտացում

Արթուր Լյուդվիգի Աթաբեկյան

Ծնվել է 23.07.1982թ. Երևանում: 2002թ. ավարտել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետը: 2008թ. ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կողմից ստացել է իրավագիտության մագիստրոսի որակավորում: 25.11.2004-11.03.2005թթ. աշխատել է Արաբկիրի թաղապետարանի կոմունալ տնտեսության բաժնում՝ որպես առաջին կարգի մասնագետ: 14.03.2005-14.09.2005թթ. աշխատել է ՀՀ տնտեսական դատարանում՝ նախ որպես գրասենյակի քարտուղար-օպերատոր, ապա՝ գրասենյակի պետ: 30.09.2005-13.09.2006թթ. աշխատել է ՀՀ վճարել դատարանի աշխատակազմի դատական պրակտիկայի ամփոփման և դատական վիճակագրության վարչությունում՝ որպես մասնագետ: 13.09.2006-01.04.2008թթ. աշխատել է ՀՀ դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման և դատական վիճակագրության վարչության մասնագետ: 01.04.2008թթ. առ այսօր աշխատում է ՀՀ դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման վարչության ավագ մասնագետ: Ամուսնացած չէ:

Լիզա Ռաֆիկի Գրիգորյան

Ծնվել է 26.05.1973թ. Երևանում: 1995թ. ավարտել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետը: 2011թ. Հայաստանի ամերիկյան համալսարանի կողմից ստացել է իրավագիտության մագիստրոսի կոչում: 23.02.1993-12.01.1999թթ. աշխատել է Երևանի Էրեբունու շրջանի ժող. դատարանում՝ նախ որպես գործավար, ապա՝ նիստերի քարտուղար: 17.03.1999-03.08.2007թթ. եղել է ՀՀ փաստաբանների միության անդամ: 01.02.1999-01.01.2008թթ. աշխատել է ՀՀ իրավաբանների միության իրավական օգնության սոցիալական կենտրոնում՝ որպես իրավախորհրդատու, 01.01.2008-27.06.2008թթ.՝ ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակում՝ որպես հանրային պաշտպան, 01.01.2009-28.02.2010թթ.՝ «Քեյ Փարթնրզ» ՓԲԸ-ում՝ որպես իրավաբան, 01.02.2010-02.08.2010թթ.՝ «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ում՝ որպես իրավաբան: Ամուսնացած չէ:

Տիգրան Սիմոնի Գրիգորյան

Ծնվել է 30.08.1982թ. Երևանում: 2002թ. ավարտել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետը: 2007թ. ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կողմից ստացել է իրավագիտության մագիստրոսի որակավորում: 21.01.2002-30.07.2002թթ. աշխատել է «Արբանգ» ՍՊԸ առընթեր Հայկական Գիտարանի իրավագիտական բաժնում՝ որպես փորձագետ, 01.08.2002-01.11.2005թթ.՝ Աշտարակի քաղաքապետարանի իրավաբանական բաժնում՝ որպես մասնագետ, 09.08.2006-16.05.2007թթ.՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետության դեմ դատական պահանջների պաշտպանության բաժնում՝ որպես առաջատար մասնագետ, 17.05.2007-10.08.2009թթ.՝ ՀՀ դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման վարչությունում՝ որպես մասնագետ, ապա՝ ավագ մասնագետ: 10.08.2009թ. առ այսօր աշխատում է ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես աշխատակազմի ղեկավար: Ամուսնացած չէ:

Քրիստինե Աղվանի Գրիգորյան

Ծնվել է 27.08.1981թ. Սևանում: 2002թ. ավարտել է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի բակալավրիատը, ապա՝ մագիստրատուրան: 2008թ. ավարտել է Հյուսիսային համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: 01.12.2004-17.03.2009թթ. աշխատել է ՀՀ ԱԺ օրենսդրության վերլուծության և զարգացման վարչությունում՝ որպես գործավար-մասնագետ, 17.03.2009-12.10.2009թթ.՝ ՀՀ ԱԺ աշխատակազմի արտաքին հարաբերությունների վարչության

թարգմանչական բաժնում՝ որպես թարգմանիչ: 12.10.2009թ. առ այսօր աշխատում է ՀՀ ԱԺ աշխատակազմում՝ որպես աշխատակազմի ղեկավարի օգնական: Ամուսնացած չէ:

Նորա Արայիկի Կարապետյան

Ծնվել է 22.02.1984թ. Երևանում: 2004թ. ավարտել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի բակալավրիատը, 2006թ.՝ մագիստրատուրան, 2010թ.՝ ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի ասպիրանտուրան: 12.07.2006-09.01.2008թթ. աշխատել է ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի օրենսդրության ներդրման և միջազգային կապերի բաժնում՝ որպես մեթոդաբան: 10.01.2008-02.04.2008թթ. աշխատել է Երևանի քրեական դատարանի դատավորի օգնական: 02.04.2008-02.03.2009թթ. աշխատել է ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների վարչությունում՝ նախ որպես ավագ մասնագետ, ապա՝ վարչության պետ: 02.03.2009թ. առ այսօր աշխատում է ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարի առաջին տեղակալ, ՀՀ դատարանների մախագահների խորհրդի քարտուղար: Դասախոսել է ԵՊՀ-ում, Ռուս-Հայկական /Սլավոնական/ համալսարանում, ՀՀ դատական դպրոցում, ՀՀ ոստիկանության ակադեմիայում, Հայկական բաց համալսարանում: Իրավաբանական գիտությունների թեկնածու է: Ամուսնացած է:

Մերի Գևորգի Համբարձումյան

Ծնվել է 26.07.1986թ. Գյումրիում: 2007թ. ավարտել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի բակալավրիատը, 2009թ.՝ մագիստրատուրան: 07.05.2009-22.06.2010թթ. աշխատել է ՀՀ դատական դեպարտամենտի անձնակազմի կառավարման վարչությունում՝ որպես կրտսեր մասնագետ, 22.06.2010-01.10.2010թթ.՝ Սալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական, 01.10.2010-08.10.2010թթ.՝ ՀՀ դատական դեպարտամենտում՝ որպես արարողակարգի հարցերով պատասխանատու: 08.10.2010թ. առ այսօր աշխատում է ՀՀ դատական դեպարտամենտի անձնակազմի կառավարման վարչությունում՝ որպես մասնագետ: Ամուսնացած է:

Էդգար Էդիկի Հովհաննիսյան

Ծնվել է 27.06.1983թ. Էջմիածնում: 2006թ. ավարտել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետը: 03.07.2006-01.01.2008թթ. աշխատել է Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնական, 01.01.2008-12.02.2009թթ.՝ Երևանի քաղաքացիական դատարանում՝ որպես դատավորի օգնական, 02.03.2009-23.03.2011թթ.՝ ՀՀ վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի օգնական: 23.03.2011թ. առ այսօր աշխատում է ՀՀ վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի ավագ օգնական: Ամուսնացած է, ունի 2 երեխա:

Ջարուհի Կարենի Նախչարյան

Ծնվել է 15.02.1976թ. Երևանում: 2006թ. ավարտել է Երևանի «Գրիգոր Ջոհրապ» համալսարանը՝ ստացել է իրավագետի որակավորում: 01.02.1994-16.10.1996թթ. աշխատել է Հայաստանի պետական հեռուստառադիոընկերության միջազգային հարաբերությունների բաժնում՝ որպես թարգմանիչ, այնուհետև՝ իրավախորհրդատու, 10.11.1997-23.03.1999թթ. աշխատել է ՀՀ փաստաբանների կոլեգիայի անդամ: 23.03.1999թ. ընդգրկվել է Փաստաբանների միջազգային միության կազմում: 12.08.1999-04.01.2007թթ. աշխատել է «Ընդդեմ իրավական կամայականության» հիմնադրամում՝ որպես իրավաբան-իրավախորհրդատու: 1999թ.-ից ՀՀ փաստաբանների պալատի անդամ: 01.03.2005-18.06.2009թթ. աշխատել է Ալիխանյանի անվան Երևանի ֆիզիկայի ինստիտուտում՝ որպես իրավախորհրդատու: 01.05.2004-28.12.2005թթ. աշխատել է «Ռուբիկոն ՓԳ» ՍՊԸ-ում որպես փաստաբան: 28.12.2005թ. առ այսօր աշխատում է «Ռուբիկոն ՓԳ» ՍՊԸ-ում որպես տնօրեն: Ամուսնացած է, ունի 1 երեխա:

Գևորգ Գրիշայի Նարինյան

Ծնվել է 01.09.1979թ. Երևանում: 2001թ. ավարտել է Երևանի Մենեջմենթի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: 03.01.2001-15.12.2001թթ. և 20.09.2002-30.12.2002թթ. աշխատել է «Արաքս-ֆիրմա» ՍՊԸ-ում՝ որպես իրավախորհրդատու: 2003թ. ավարտել է Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանը՝ ճարտարապետ-շինարարի որակավորմամբ: 07.01.2003- 26.01.2007թթ. աշխատել է ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնական, 26.01.2007-01.01.2008թթ.՝ ՀՀ վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի խորհրդական, 01.01.2008-27.02.2009թթ.՝ Երևանի քաղաքացիական դատարանում՝ որպես դատարանի մախագահի խորհրդական: 02.03.2009թ. առ այսօր աշխատում է ՀՀ վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի օգնական: Ամուսնացած է, ունի 2 երեխա:

Սերգեյ Ժորայի Սահակյան

Ծնվել է 19.11.1978թ. Կոտայքի մարզի Լեռնանիստ գյուղում: 1999թ. ավարտել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետը: 20.09.2001-25.04.2002թթ. աշխատել է «Հրազդանմաշ» ՓԲԸ իրավաբանական բաժնում՝ որպես իրավաբան: 30.04.2002-17.05.2007թթ. աշխատել է ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի նախագահի օգնական: 17.05.2007-01.01.2010թթ. աշխատել է ՀՀ դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման վարչությունում՝ որպես ավագ մասնագետ: 01.01.2010թ. առ այսօր աշխատում է ՀՀ դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման վարչությունում՝ որպես վարչության պետի տեղակալ: Անուսնացած է, ունի 1 երեխա:

Իռեն Վախթանգի Սարգսյան

Ծնվել է 24.07.1984թ. Վանաձորում: 2006թ. ավարտել է Մոսկվայի նոր իրավաբանական ինստիտուտի Երևանյան մասնաճյուղը: 2006թ. ավարտել է Երևանի «Մանց» համալսարանը՝ ստանալով իրավագետի որակավորում, 2008թ.՝ իրավագիտության մագիստրոսի որակավորում: 01.03.2007թ-01.10.2007թթ. աշխատել է «Եվրոստան ՈՒյուտ» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան: 05.05.2008թ. առ այսօր աշխատում է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ որպես դատավորի օգնական: 2010թ. ստացել է ՀՀ փաստաբանների պալատի փաստաբանական գործունեության արտոնագիր: Անուսնացած չէ:

Տիգրան Ռոբերտի Փոլադյան

Ծնվել է 20.03.1982թ. Երևանում: 2002թ. ավարտել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի բակալավորիատը, 2004թ.՝ մագիստրատուրան: 2007թ. ավարտել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի ասպիրանտուրան: 06.08.2002-04.10.2004թթ. աշխատել է ՀՀ կենտրոնական բանկի իրավաբանական վարչությունում՝ որպես մասնագետ, ապա՝ իրավախորհրդատու: 05.10.2004-02.05.2005թթ. աշխատել է «Գրեյթ Վելլի» ՀԶ ՍՊԸ-ում՝ որպես գլխավոր իրավախորհրդատու: 03.05.2005-27.04.2006թթ. աշխատել է ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնում՝ որպես մեթոդաբան: 01.08.2006թ.-01.07.2008թթ. աշխատել է «Ձարգացման հայկական բանկ» ԲԲԸ իրավաբանական բաժնի ղեկավար-գլխավոր խորհրդատու: 01.02.2009-31.08.2009թթ. աշխատել է «Գարեգինյան եղբ.» ՍՊԸ-ում որպես իրավաբանական վարչության պետ, գործադիր տնօրենի գլխավոր խորհրդատու: 01.09.2009-09.11.2009թթ. աշխատել է «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ում՝ որպես իրավաբանական ստորաբաժանման իրավաբան: 09.11.2009-17.07.2010թթ. աշխատել է «Նորվիկ» ՈՒՎԿ ՓԲԸ-ում՝ որպես իրավաբանական բաժնի մենեջեր: 17.07.2010թ. առ այսօր աշխատում է «Նորվիկ» ՈՒՎԿ ՓԲԸ-ում՝ որպես գործադիր տնօրենի տեղակալ: Անուսնացած չէ:

Քրեական մասնագիտացում

Հրանտ Մամիկոնի Ավետյան

Ծնվել է 12.10.1962թ. Ալավերդիում: 1989թ. ավարտել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետը: 11.11.1992-20.02.2009թթ. աշխատել է ՀՀ ոստիկանությունում՝ որպես քննիչ: 25.02.2009թ. առ այսօր աշխատում է ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչության 2-րդ բաժնում՝ որպես քննիչ: Անուսնացած է, ունի 3 երեխա:

Մարտին Վահանի Գևորգյան

Ծնվել է 08.03.1980թ. Երևանում: 2000թ. ավարտել է Քրոք-Քրոքորյանի անվան համալսարանի /Երևանի տնտեսաիրավագիտական համալսարան/ իրավագիտության քրեական իրավունք և դատավարություն ֆակուլտետը, 2006թ.՝ Գավառի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը: 28.08.2000-05.12.2001թթ. աշխատել է ՀՀ վճռաբեկ դատարանում՝ որպես գրասենյակի առաքիչ, 26.11.2001-01.06.2006թթ.՝ Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնական: 02.06.2006թ. առ այսօր աշխատում է Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնական: Անուսնացած է, ունի 2 երեխա:

Դավիթ Մարտինի Գրիգորյան

Ծնվել է 09.07.1967թ. Երևանում: 1991թ. ավարտել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետը: 1999թ. վերապատրաստվել է ՌԴ գլխավոր դատախազության Սանկտ-Պետերբուրգի իրավաբանական ինստիտուտում: 07.10.1991թ.-ից աշխատում է ՀՀ դատախազության համակարգում՝ նախ որպես Շահունյանի շրջանի դատախազության ստաժոր-քննիչ /07.10.1991-22.10.1992թթ./, այնուհետև՝ Էրեբունու շրջանի դատախազության քննիչ /22.10.1992-11.09.1997թթ./, այնուհետև՝ Էրեբունի և Նուբարաշեն համայնքների դատախազի օգնական /11.09.1997-27.12.2002թթ./, այնուհետև՝ Էրեբունի և Նուբարաշեն համայնքների դատախազի ավագ օգնական /27.12.2002-07.10.2004թթ./, այնուհետև՝ Էրեբունի և Նուբարաշեն համայնքների դատախազի տեղակալ /07.10.2004-

10.11.2009թթ./: 10.11.2009թ. առ այսօր աշխատում է Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազությունում՝ որպես դատախազի տեղակալ: Ամուսնացած է, ունի 2 երեխա:

Արտակ Յենրիկի Թադևոսյան

Ծնվել է 26.02.1974թ. Երևանում: 1996թ. ավարտել է «Գրիգոր Զոհրապ» համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, 2002թ.՝ Երևանի «Գալիք» համալսարանի իրավագիտության ֆակուլտետը: 2002թ. ստացել է պատմական գիտությունների թեկնածուի աստիճան: 01.10.1996-08.03.1999թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում՝ որպես ավագ լաբորանտ, այնուհետև՝ կրտսեր գիտաշխատող, 15.03.1999-05.05.2006թթ.՝ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանում՝ որպես դատավորի օգնական, 06.05.2006-30.05.2008թթ.՝ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովում՝ որպես իրավաբանական և վարչական վարույթի վարչության վարչական վարույթի բաժնի պետ-վարչության պետի տեղակալ: 02.06.2008-01.01.2010թթ. աշխատել է ՀՀ դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման վարչությունում՝ որպես մասնագետ: 01.01.2010թ. առ այսօր աշխատում է ՀՀ դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման վարչությունում՝ որպես ավագ մասնագետ: 02.06.2008թ. առ այսօր դասախոսում է Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի իրավագիտության ամբիոնում: Ամուսնացած է, ունի 1 երեխա:

Ստելլա Գագիկի Համբարձումյան

Ծնվել է 19.06.1984թ. Երևանում: 2004թ. ավարտել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, 2006՝ մագիստրատուրան: 04.04.2007-01.08.2008թթ. աշխատել է «Մետոս գրուպ» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան, 06.03.2008-29.10.2010թթ.՝ «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամում՝ որպես գլխավոր մասնագետ-իրավաբան: 01.11.2010թ. առ այսօր աշխատում է «ԷՔՍՈՒՄՅ ԹԵԼԼԻ» ՍՊԸ-ում՝ որպես գլխավոր մասնագետ, իրավաբան: Այրի է, ունի 1 երեխա:

Ռուբիկ Հրանտի Մխիթարյան

Ծնվել է 20.06.1973թ. Մարնետուլի շրջանի Դամիա գյուղում: 1995թ. ավարտել է «ՄՅՈՒԴ» իրավաբանական ինստիտուտը, 2005թ. հանձնել է պետական քննություններ և ստացել պետական նմուշի բարձրագույն կրթության դիպլոմ՝ իրավագետի որակավորմամբ: 03.07.1995-26.02.1996թթ. աշխատել է Վրաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Շրոմա» եթերայուղային խորհտնտեսությունում՝ որպես իրավաբան, ապա 13.01.1997-07.01.1999թթ. Սպանդարյանի շրջանի ժող. դատարանում, այնուհետև Շահումյանի շրջանի ժող. դատարանում՝ որպես դատական կատարածու, 08.01.1999-10.02.1999թթ.՝ ՀՀ արդարադատության նախարարության ԴԱՀԿ ծառայությունում՝ որպես Երևան քաղաքի ստորաբաժանման հարկադիր կատարող, 25.01.1999-14.02.2007թթ.՝ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնական: 14.02.2007թ. առ այսօր աշխատում է ՀՀ դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման վարչությունում՝ որպես ավագ մասնագետ: Ամուսնացած է, ունի 2 երեխա:

Անդրանիկ Մնացականի Մնացականյան

Ծնվել է 18.10.1987թ. Թալինում: 2008թ. ավարտել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, 2010թ.՝ մագիստրատուրան: 05.06.2008-05.08.2009թթ. աշխատել է «Բուգել» ՍՊ ընկերությունում՝ որպես իրավաբան, 10.08.2009-11.01.2011թթ.՝ Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական: 11.01.2011թ. առ այսօր աշխատում է Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական: Ամուսնացած չէ:

Արմեն Վանիկի Սարգսյան

Ծնվել է 03.05.1978թ. Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղ գյուղում: 2001 թ. ավարտել է ՆԳՆ Ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետը՝ ստացել է իրավաբանի որակավորում: 16.10.2010թ. ստացել է ՀՀ փաստաբանների պալատի փաստաբանական գործունեության արտոնագիր: 2001-2004թթ. աշխատել է ՀՀ Ոստիկանության ՔԳՎ Գեղարքունիքի մարզային բաժնի Վարդենիսի քննչական բաժանմունքում՝ որպես քննիչ: Ամուսնացած է, ունի 2 երեխա:

Վարչական մասնագիտացում

Արմեն Սերյոժայի Դավթյան

Ծնվել է 03.03.1970թ. Արագածոտնի մարզի Բազմաղբյուր գյուղում: 1997թ. ավարտել է «ՄՅՈՒԴ» իրավաբանական ինստիտուտը, 2006թ. Երևանի տնտեսաիրավագիտական համալսարանում

հանձնել է պետական քննություններ և ստացել պետական նմուշի բարձրագույն կրթության դիպլոմ՝ իրավագետի որակավորմամբ: 01.09.1996-25.11.1997թթ. աշխատել է ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում՝ որպես իրավաբան-գործակալ, 29.04.1999-28.10.2001թթ.՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ որպես դատական նիստերի քարտուղար, 24.11.2001-26.01.2007թթ.՝ ՀՀ տնտեսական դատարանում՝ որպես դատավորի օգնական, 26.01.2007-01.01.2008թթ.՝ ՀՀ վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի խորհրդական, 01.01.2008-11.02.2009թթ.՝ Երևանի քաղաքացիական դատարանում՝ որպես դատավորի օգնական: 02.03.2009թ. առ այսօր աշխատում է ՀՀ վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի ավագ օգնական: Ամուսնացած է, ունի 2 երեխա:

Ռաֆիկ Գագիկի Խանդանյան

Ծնվել է 05.11.1983թ. Գավառում: 2005թ. ավարտել է Ռուս-Հայկական /Սլավոնական/ պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը: 2008թ. ստացել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2005-2006թթ. աշխատել է «ԱՆԴՐՈՆ» գիտահետազոտական ինստիտուտում՝ որպես իրավախորհրդատու, 2006-2007թթ.՝ «ԴՈՒՖԱ» ՍՊԸ-ում՝ որպես փոխտնօրեն, 24.09.2007-29.09.2008թթ.՝ Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնական, 01.04.2009-03.07.2009թթ.՝ ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչությունում՝ որպես առաջատար մասնագետ, 03.07.2009-07.12.2009թթ.՝ Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի իրավաբանական բաժնում՝ որպես գլխավոր մասնագետ, 07.12.2009-24.08.2010թթ.՝ ՀՀ վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի օգնական: 24.08.2010թ. առ այսօր աշխատում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչությունում՝ որպես դատական ներկայացուցչության ապահովման բաժնի պետ: Ամուսնացած չէ:

Ալեքսանդրա Ալեքսեյի Հարությունյան

Ծնվել է 13.03.1979թ. Կապանում: 2000թ. ավարտել է Սիսիանի պետական հումանիտար քոլեջի իրավագիտության ֆակուլտետը, 2008թ.՝ Արտաքին տնտեսական կապերի համալսարանի իրավագիտության ֆակուլտետը: 30.10.2001-01.01.2008թթ. աշխատել է ՀՀ տնտեսական դատարանում՝ նախ որպես դատական նիստերի քարտուղար, ապա՝ դատավորի օգնական: 16.01.2008թ. առ այսօր աշխատում է ՀՀ վարչական դատարանում՝ որպես դատավորի գործավար, ապա որպես դատավորի օգնական: Ամուսնացած է, ունի 1 երեխա:

Անի Գրիգորի Հարությունյան

Ծնվել է 29.09.1982թ. Երևանում: 2003թ. ավարտել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը, 2005թ.՝ Ուորվիքի համալսարանի /Մեծ Բրիտանիա/ մագիստրատուրան: 18.07.2001-14.05.2006թթ. աշխատել է «ՊետԱպ-Հայաստան» ՓԲԸ-ում՝ որպես իրավախորհրդատու, այնուհետև որպես գլխավոր իրավախորհրդատու, 15.05.2006-09.07.2008թթ.՝ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ում՝ որպես իրավախորհրդատու, այնուհետև որպես իրավաբանական բաժնի պետ: 10.07.2008թ. առ այսօր աշխատում է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի աշխատակազմի հեռահաղորդակցության վարչությունում՝ որպես գլխավոր մասնագետ: Ամուսնացած է, ունի 2 երեխա:

Միքայել Գագիկի Մելքունյան

Ծնվել է 01.12.1983թ. Բաքվում: 2003թ. ավարտել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի բակալավրիատը, 2005թ.՝ մագիստրատուրան: 14.04.2008-09.09.2008թթ. աշխատել է Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական, 09.09.2008-28.02.2009թթ.՝ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական, 06.03.2009-15.12.2010թթ.՝ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական: 15.12.2010թ. առ այսօր աշխատում է ՀՀ վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական: Ամուսնացած է:

Արսեն Սերժիկի Նիկողոսյան

Ծնվել է 22.04.1981թ. Երևանում: 2002թ. ավարտել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի բակալավրիատը, 2004թ.՝ մագիստրատուրան: 2007թ. ստացել է իրավագիտության թեկնածուի կոչում: 2009թ. ավարտել է Թաֆթսի Համալսարանի Ֆլետչերի իրավունքի և դիվանագիտության դպրոցը: 2011թ. ստացել է ԵՊՀ իրավագիտության դոցենտի կոչում: 2002-2004թթ. աշխատել է ՀՀ կառավարության աշխատակազմում՝ որպես իրավաբանական վարչության առաջատար մասնագետ: 01.02.2005թ. առ այսօր աշխատում է ՀՀ ԿԸ Հարկային Պետական Ծառայությունում/ Պետական եկամուտների կոմիտեում՝ նախ որպես իրավաբանական վարչության մասնագետ, այնուհետև՝ հայցային աշխատանքների բաժնի առաջատար մասնագետ, այնուհետև՝ օպերատիվ-հետախուզության վարչության ավագ օպերլիազոր, այնուհետև՝ իրավաբանական վարչության

իրավական վերահսկողության և վերլուծության բաժնի առաջատար մասնագետ, այնուհետև՝ գլխավոր մասնագետ: 30.01.2009թ. առ այսօր աշխատում է ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ որպես իրավաբանական վարչության պետի տեղակալ: 2004թ. առ այսօր դասախոսում է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետում: Անուսնացած է:

Քնորդ Միքայելի Սոսյան

Ծնվել է 29.07.1981թ. Երևանում: 2007թ. ավարտել է Երևանի դատական փորձագիտության և հոգեբանության ինստիտուտը դիպլոմավորված իրավագետի մասնագիտությամբ: 08.09.2006թ.-07.12.2007թ. աշխատել է ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Երևան քաղաքի Սալաթիա-Սեբաստիա տարածքային կենտրոնում՝ որպես իրավախորհրդատու, 07.12.2007թ.-07.01.2008թ.՝ նույն տեսչության իրավական ապահովման և փաստաթղթային հոսքերի կառավարման բաժնում՝ որպես առաջատար մասնագետ, 10.01.2008թ.-12.02.2009թ. աշխատել է ՀՀ վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական, 04.03.2009թ. առ այսօր աշխատում է ՀՀ վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի ավագ օգնական: Անուսնացած է, ունի 1 երեխա: